ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 30 >> << Դեկտեմբեր >> 2019թ. N 179/05-2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, երկրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N143-Ն հրամանի պահանջները.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2019 թվականի ներքին աուդիտի հաստատված տարեկան ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի թվով 6՝ <<Արմավիրի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Արմավիրի N5 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Զարթոնքի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Լենուղու միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Արաքսի /Արմավիր/ միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում և <<Սարդարապատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում իրականացնել 2016, 2017, 2018 թվականների բյուջետային տարվա գործունեության ֆինանսական աուդիտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Արայիկ Հակոբյանի, գլխավոր մասնագետներ Վիգեն Խաչատրյանի, Սրապիոն Մարտիրոսյանի, Արմինե Գրիգորյանի և Հայկ Պողոսյանի կողմից:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա. Հակոբյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել ֆինանսական աուդիտ անցկացվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին և հաշվապահներին (համաձայնությամբ):

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա. Հակոբյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 22 աշխատանքային օրյա ժամկետում:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ.Վարդազարյանին:
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Недействительная подпись

VERIFIED OCSP 30.01.2019 17:48:29 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230 Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

0901 թ. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am